

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին  
17.03.2021թ. թիվ 2112415416 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց  
բավարարման թողնելու մասին

<< 06 >> 05 2021թ. 7-13- 7356

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ  
Ե.Կարապետյանս, վերանայելով քաղաքացի Սմբատ Գևորգյանի ՄԴ/32548-21  
դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

## Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Գ.Նժդեհի փողոցի 3-րդ շենքի  
22-րդ բնակարանի բնակիչ Սմբատ Գևորգյանը դիմումով իր անհամաձայնությունն  
է հայտնել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին  
թիվ 2112415416 որոշմանը՝ նշելով, որ ավտոմոբիլը կայանել է բանկի դիմացի  
ավտոկայանատեղիում:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուին վարչական  
պատասխանատվության ենթարկելու մասին թիվ 2112415416 որոշումը օրինական է  
և իրավաչափ, իսկ դիմումատուի փաստարկն այն անվավեր ճանաչելու հիմք չի  
կարող հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին  
մասի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է  
պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում  
գործող օրենսդրության հիման վրա:

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված  
ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով  
իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի  
3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման  
հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը  
իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է  
նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ  
մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ  
դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական  
իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի  
251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<< կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և  
տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու  
պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 80-  
րդ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցը տեղակայել թույլատրվում է  
երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով՝ բացառությամբ այն տեղերի  
/երթևեկելի մասի տեղային լայնացում/, որտեղ գծանշմամբ թույլատրված են  
տրանսպորտային միջոցների դասավորման այլ ձևեր:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124--րդ հոդվածի 21-  
րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի  
և (կամ) կայանման կանոնները խախտելը, առաջացնում է տուգանքի նշանակում՝

սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր:

Իրավախախտումը ամրագրած թիվ 2112415416 որոշման տեսանյութը փաստում է, որ դիմումատուին պատկանող <<FORD>> մակնիշի 096XX96 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը տեղակայված է եղել Երևան քաղաքի Պուշկին-Նալբանդյան-Վարդանանց փողոցների խաչմերուկի հատվածի երթևեկելի մասի երկրորդ շարքում 25.02.2021թ-ին ժամը 12:23:00 վայրկյանից, 12:24:17 վայրկյանը՝ 77 վայրկյան տևողությամբ, իսկ <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, չի գերազանցել **մեկ րոպե ժամանակահատվածը**, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

### **Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 17.03.2021թ. թիվ 2112415416 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Սմբատ Գևորգյանին:



**Ե. Կարապետյան**